Սեմիի սուրբ գրությունները

Կարոլինա Մալդոնադո
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Բոլիվիայում:

Ընտանեկան երեկոյի վերջում հայրիկը ձեռքերն իրար խփեց: «Ես մի միտք ունեմ ընտանեկան նպատակի համար»,- ասաց նա: «Եկեք ամեն օր միասին կարդանք Մորմոնի Գիրքը»:

Սեմիի ավագ եղբայրները՝ Անդրեսը և Խուանը, գլխի շարժումով համաձայնեցին այդ մտքին և ուրախ ժպտացին:

«Շատ լավ»,- ասաց Անդրեսը:

Սեմին նույնպես ոգևորվեց: Բայց հետո նա մի բան հիշեց: Նա ձեռքը բարձրացրեց: «Ես կարդալ չեմ կարողանում: Ուրեմն, ինչպե՞ս օգտակար լինեմ»:

Խուանը ուսերը թոթվեց: «Դու կարող ես պարզապես լսել»:

Սեմիի եղբայրներն արդեն կարդում էին: Բայց Սեմին դեռ հինգ տարեկան էր: Նա դեռ չէր սովորել կարդալ:

«Բայց ես էլ եմ ուզում օգնել», - խոժոռվելով ասաց Սեմին:

ԱՄՈՒՍԻՐԸ՝ ՄԵԼԻՍՍԱ ՄՈՆՏԻԼ ԿԱԶԻՆԻՆԻ

Մայրիկը գրկեց Սեմիին: «Եվ դու կօգնես», - ասաց նա: «Միշտ ճանապարհ կա անելու այն, ինչ Աստված մեզ պատվիրում է»:

Հաջորդ օրը երեկոյան Սեմիի ընտանիքը հավաքվեց՝ կարդալու Մորմոնի Գիրքը: Նրանք բոլորը բերել էին իրենց սուրբ գրությունները՝ բացի Սեմիից: Մայրիկը նրան տվեց Մորմոնի Գրքի պատմությունների պատկերագիրքը:

«Դու չես կարող բառերը կարդալ: Բայց դու կարող ես կարդալ նկարները», - ժպիտով ասաց նա:

Սեմին գիրքը մոտեցրեց իրեն: Այժմ նա նույնպես կարող էր կարդալ իր ընտանիքի հետ միասին:

Նրանք հերթով կարդում էին: Սեմին նայում էր նկարներին, որոնք պատկերում էին պատմությունը: Երբ գալիս էր իր հերթը, նա պատմում էր մյուսներին, թե ինչ է տեսնում նկարներում: Պատմելիս նա հնարավորինս շատ մանրամասներ էր ասում:

Ժամանակի հետ Սեմին ցանկանում էր ավելի շատ կարդալ: Մայրիկը սովորեցնում էր նրան, թե յուրաքանչյուր տառն ինչպես է հնչում: Այնուհետև՝ նա ցույց տվեց, թե ինչպես բառեր կազմել: Ամիսներ անց Սեմին արդեն պատկերագրքի կարիքն այնքան շատ չուներ: Նա արդեն կարդում էր իր ընտանիքի կարդացած յուրաքանչյուր հատվածի վերջին բառը: Նախ մայրիկն էր կարդում բառը, ապա Սեմին կրկնում էր:

Սկզբում նրանք դանդաղ էին կարդում: Յուրաքանչյուր գլխի ավարտին հասնելու համար երկար ժամանակ էր պահանջվում: Անդրեսն ու Խուանը հորանջում էին, երբ Սեմիի հերթն էր լինում: Սակայն նրանք շարունակում էին ընտանիքով կարդալ:

Քիչ-քիչ Սեմին ավելի շատ էր կարդում: Նա կարդում էր հատվածից մի բառ, հետո՝ երկու, ապա՝ երեք բառ: Այնուհետև նա սկսեց կարդալ ամբողջ հատվածը:

Սեմին նույնպես ցանկանում էր կարդալ:

Երբ նրանց նպատակն արդեն մոտ էր իրականացմանը, Սեմին կարողանում էր ինքնուրույն կարդալ մի քանի հատված: Նրա կարդալու ունակությունը զգալիորեն բարելավվել էր: Նրա սերը Մորմոնի Գրքի հանդեպ նույնպես աճել էր:

Ի վերջո, Սեմիի ընտանիքը ավարտեց Մորմոնի Գրքի ընթերցանությունը: Դա տևեց երկու տարի: Այժմ Սեմին յոթ տարեկան էր և սովորել էր վարժ կարդալ:

«Շնորհավորում եմ»,- ասաց հայրիկը: «Մենք դա արեցինք»:

Սեմին ուրախանում էր իր ընտանիքի հետ: Նա օգնեց նրանց կարդալ Մորմոնի Գիրքը:

Խուանը ամուր գրկեց Սեմիին: «Ո՞րն է լինելու քո նպատակը հաջորդ երկու տարիների համար»:

Սեմին ժպտաց: Նա ուղղեց մեջքն ու ասաց. «Ես նորից կկարդամ Մորմոնի Գիրքը»: ●

Ի՞նչն օգնեց Սեմիին կարդալ սուրբ գրությունները: